

Յըս պիտի ասենք որ եթէ հասարակութիւնն այդ քան վստահութիւն ցոյց տւեց սովորոց յանձնաժողովին, հասկանալի է որ վերջինն էլ այդ վստահութեան համեմատ իր արժանիքը(?) պիտի ցոյց տայ ժամանակին (երբ) մի ընդհանուր հաշիւ տալու նիւրաւ հասարակութեան քարտը, բայց այդ տեսակ քարտը շատ է լսել վստահութիւն, տրժանիք և պարտաճանաչութիւն ու նեցող անձնաւորութիւնները, բայց հաշիւ տալը մինչև այսօր էլ դեռ երազ է մնում:

Եւ թէ դեռ մենք ոչինչ չը խօսած այդ հանգանակութիւնների մասին, յանձնաժողովից ուղարկած պատգամաւորը յայտնում է «մի գտնէ թէ հրապարակա հաշիւ պահանջներ դա մատնութիւն կը լինի» մինչդեռ գորա զիմաց կարգում ենք «ե թէ իր ժամանակին կատարեալ և մանրամասն հաշիւ պիտի ներկայացնէ հասարակութեանը, առանց ազմուկ բարձրացնելու և ազդիս շահերը վտանգելու և կամ թէ օտար ուշադրութիւններ հրաւիրելու...» մինչդեռ խմբագրութեան յանձնած մի նըպատակի հասցնելու համար 710 ղռան գումարի խնդիրը արդէն դատի էր հասնում:

Բայց մենք չունինք այդքան խոհեմութիւն կեղծելով վերաբերելու հասարակական խնդիրների հետ և լռելու, ուստի հրապարակա պահանջում ենք թէ լուսաւորչական և թէ բողոքական համայնքների մինչև այսօր յօգուտ տառապելիների և սովորոց թէ հանգանակութեամբ և թէ երեկոյնով հաւաքած գումարների մանրամասն հաշիւը, որ մօտ 3—4000 թումանի է հասնում, մանաւանդ նրանց գործադրութեան եղանակի մասին: Ինչ անուն կուզեն թող տան, բայց խաբել՝ երբէք չեն կարող մեզ:

ՊՈԽԼԿԱՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԽՆԴՐԱԳՐԻ ՊԱՏԱՃԵՆԸ ԱՌ Կ. ՊՕԼՍՈՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՐ

Ազնւաշուք
Ատենապետ և անգամք Աղգ. պատկ.
Քաղաքական ժողովին

Կ. Պօլիս
Հայութեան ներկայ ատենապալի վիճակին մէջ՝ աւելի քան երեք, զգալի է թէ՛ ազգային գործերը ղեկավարելու համար բացարձակապէս պէտք է խաշական և անյողադր մի գործունէութիւն:

Հիմա՝ ուր ամեն կողմ հայ հասարակութիւնը դժնգակ կացութեան, վշտի և տրտակարգ նեղութեան մէջ կը գտնուի, մեր ազգին համար բացարձակ և անհրաժեշտ պէտք մըն է ունենալ այնպիսի պետ մը, որ կրէ հոգի մը խանդոտ, և իր կորովն ու կալքը ամբողջ գործածէ միայն յօգուտ և ի նպաստ իր առաւապեալ ժողովուրդին:

Չափազանց ուրախալի է ուրեմն տեսնել, որ ազգային այս անխուսափելի պէտքը լցւած է արդէն յանձին Ամենապատիւ Տ. Իզմիրեան պատրիարքին, որ իր ընտրւած օրէն ի վեր յամենայն դէպքս պահած է իր ընտիր նկարագիրը, և միշտ ցոյց տւած է ազգօգուտ մի պաշտօնավարութիւն, իր բոլոր գործառնութեանց մէջ իրեն առաջնորդ ունենալով ընդհ. հայ ժողովուրդին շահն ու օգուտը:

Ինչպէս ամենուրեք՝ նոյնպէս և հոս հայ ժողովուրդը բացարձակ համակրու-

թիւն և սէր ունի հանգէպ Սրբազան Պատրիարքին, որ իր ժողովրդասէր ձգտումներով, ազգասէր և գնահատելի ընթացքով հաստատած է միշտ թէ կատարեալ արժանաւորութեամբ բազմած է պատրիարքական գահին վրայ և գիտէ խորհել ու հոգալ ժողովուրդի պէտքերը, ամոքել անոր ցաւերն և ամեն դժբարութիւններու առջև ցոյց տալ յամառ հաստատամտութիւն, անկուկ կամք ու տոկոսութիւն:

Ուստի տեւոյս ժողովուրդին միակամ փափայն է տեսնել, որ Ամենապատիւ Իզմիրեան արագան նոյն եռանդով ու ոգով որով շարունակէ իր բարձր ուսուրբ պաշտօնը ի հանգրտութիւն և ի միութարութիւն անպաշտպան հայոց ազգին:

Դժբախտաբար անհուն ցաւով և սոսկալի տհաճութեամբ կիմանանք, որ զանազան դաւաճանութիւններով *) անիմաստ ճիգեր է լինում պէտքի հայազգը զրկել ի սիրեցեալ պատրիարքէն, բան մը որ անգարման է կորուստ մընէ մեզ համար: Այլ յայտն մեր Աղգ. սուրբ պատուոյն, թախանձագին կը խնդրենք որ պատկ. Ժողովը բարեհաճի անդրաւելի կերպով ամեն ջանք ի գործ դնել, հաստատ պահելու համար պատրիարքը իր նուիրական պաշտօնին վրայ:

Կը հաւատանք որ, որ և իցէ պատճառի առջև ժողովուրդ տեղի չպիտի տալ բնաւ ի մեծ գոհունակութիւն հայոց, պիտի պիտէ պատրիարք պահել Իզմիրեան սրբազանը, կուրծք տալով ամեն տեսակ դաւադրութեանց դէմ:

Կը խնդրենք միանգամայն որ մեր այս ժողովրդական իղձը հաճիք հաղորդել նորին Ամենապատուութեան և թարգման լինելով մեր անկողն գրաւման, ի գիմաց տեղոյս ընդհանուր հայ ժողովրդեան աղաչէք, որ ինքնալ իր սովորական հաստատամտութեամբ անվհատ դիմադրէ ամեն նենգութեանց և գործէ յարատեւ, ինչպէս ի սրտէ կը փափագենք մենք և անտարակուս ընդհանուր հայոց ազգը:

Ընդունեցէք տեաքը, մեր խորին յարգանաց հաւաստիքը:

Ստորագրութիւնք.

(Բոլոր Պուլկարիոյ կողմից)
Ռուսաճաբի հայ հասարակութիւն:

ՆԵՄԵԿ ՂԱԶԳԻՆԻՅ

5 Ապրիլ 96

Կարգացի Կուղի Ք 9-ի Ղազգիինց Քէշիշ Օղլի ստորագրութեամբ յօդւածը, որ վ թղթակիցը իր թէ հերքում է մեր Ք 7-ի նոյն ստորագրութեամբ յօդւածը: Կ թղթակիցը այդ յօդւածի հետ խառնում է Ք 5-ի Ղազգիինց լուրը և վերագրելով ինձ ասում է, իբր թէ իմ բարեկամը տարիներից առաջ Թումանեանց գործից արտաքսուելով՝ և ես կարծելով, որ գուցէ Թումանեանց տեղոյս ներկայացուցին է եղել պատճառը և ես նրան վրէժխնդիր լինելու համար գրել եմ

*) Եյս կտորը խմբագրութեանս մէջ փոխաւ է:

Ք 5-ի լուրը և անուանարկել Թումանեանց տունը:

Պարս թղթակից, դուք Թումանեանց գործից արտաքսուածի բարեկամն ինձ ակնարկելով, ասում էք վերի խօսքերը, հէնց այստեղից երևում է ձեր ամենապարզ զրպարտութիւնը: Ք 5-ի լրատուն մենք չենք և այդ առաջին հարցում ձեզ կը մնայ միայն կարմրել:

Այստեղից հաստատելով՝ որ մենք չենք Ք 5-ի լրատուն հետևապէս և մեզ վերայ չենք առնում նորա պատասխանաւորութիւնը թէ՛ Վարդանանց տուն օրը պատարագ է եղել և կամ Թումանեանց տանը հանգէս է եղել թէ թղթ թախաղութիւն. գորա համար թող խօսէ լրատուն:

Դուք մեր յօդւածի մէջ հերքում էք միայն թէ Զէյթունցիների օգտին հանգանակուած գո մարը ապագի չէ մնացել: Այդ էլ ճշտենք:

Այդ հանգանակութիւնը տեղի է ունեցել ղեկ. ամսոյ վե, ջերում և գումարը հասել է 71 թումանի, գորանից երեք հոգի միւնույն օրը վճարեցին 65 ղռան. մնացեալը մնաց ապ. ուկ մինչև Կալիլի Ք 7-ի գալու օրը, որ էր մարտ 6-ը, այդ օրն էլ հաւաքեց 35 թուման մնացեալը կրկին մնաց մինչև մարտ 20-ը այդ օրն էլ հաւաքեց 74 ղռան, նոյն օրը մասնաւոր անձերից էլ հաւաքեց 35 ղռան: Հանգանակողը տեսնելով՝ որ մնացեալը չեն վճարում, հաւաքւածը ուղարկւց մարտի 20-ին. մնացեալ 22 թումանը դեռ այժմ էլ ապագի է:

Այժմ քեզ եմ հայցնում պ. յօդւածագիր մինչև Ք 7-ի Ղազգին գալը հանգանակութիւնը ապագի էր թէ հաւաքւած և կամ նոյն իսկ այսօր, որ երեք ամից աւել է 1/3 մասը կանխիկ է թէ ապագի:

Յօդւածագիրն ասում է հանգանակութեան մի մասը ուղարկուած է փոխանորդ հօրը: Դիշտ է, փոխանորդ հօրը փող ուղարկուած է բայց ոչ թէ ընդհանուր հանգանակութեան փողից, այլ փոխանորդ հայրը մի նամակով դիմել է մի մասնաւոր անհատի և նա իր կողմից ուղարկել է մի գումար, որ երեք կապ չունի ըն հանուր հանգանակութեան հետ և թէ դա էլ ուղարկել է Ք 7-ի այս տեղ գալուց յետոյ մարտ 7—12-ին: Թղթակիցը ասում է Ք 7-ի յօդւածով համարձակել էք շօշափել ամբողջ հասարակութեան պատիւը:

Ինչ. յօդւածագիր, եթէ հանգանակութեան փողերը չը տալի, եթէ ձեր ինտէլիգենցիայի թղթախաղով պարապելը, և եթէ հասարակական և ոչ մի փոքր հաստատութիւն անգամ չունենալը (վրջին երկու հարցի մասին լուր էք ձեր հեքման մէջ և ի՛նչ պիտի ասէիք) պատուի շօշափում է, այդ կը նշանակէ, որ ինքը հասարակութիւնը կամ ինտէլիգենցիան է, որ շօշափում է իր պատիւը և ոչ թէ մենք խեղճ թղթակիցներս, որ ձեր պատիւը վերականգնեցնել ենք քանկանում:

Այս բոլորից յետոյ մի հարց էլ տամ ձեզ յօդւածագիր. դուք ձեր մի յօդւածով (որ դժբաղաբար խմբագրութեան

ուղարկելու պատիւը չունեցաւ) մեղադրում էիք ինձ թէ ծածկելով կեղծանան տակ գրել էք այդ յօդւածը, և ասում, եթէ քաջութիւն ունէք պարզեցէք ձեր անունը. ձեզ պարզ յայտնեցի անունս և խոստացայ գրածներս կըրկին հաստատելու, ինչպէս կատարում եմ յերկայ յօդւածովս: Իսկ դուք իբրև հերքող և ճշմարտութիւնը երևան հանող պէտք էր պարզ ստորագրէիք. ինչո՞ւ կեղծեցիք: Դիշտն խոստովանեցէք (գոնէ ձեզն ու ձեզ) չէիք վախում, որ խնդիրը կը պարզւի և դուք պիտի ամայէիք հասարակութեան առջև և միթէ՞ դուք պակաս անպատուութիւն էիք համարում ձեզ խմբագրութեան կամ թերթի աչից ընկնելը:

Եաւիղի Ք 7-ի Ղազգինի թղթակցութեան հեղինակ՝

Քէշիշ-Օղլի

ՆԱՄԱԿՆԵՐ ՌԱՇԵՑՑ

Ռաշտ 1 ապրիլ 96

Ռաշտի տիրացուն իր լուսթեան համար նոխատինքներ լսելով շատերից, և կամենալով ամենտողորմածաբար հանգստացնել «Աստղ-Արեւելեանի» 500 բաժանորդ ընթերցողներին, պատասխանել է «Եաւիղի» Ք 6-ում տպւած «Սուս» յօդւածագիրին:

Մի քանի տող միայն, այն էլ հայհոյանքներ, որ և է հերքում կամ փոռա—քաւ լիցի, ինչ կապած, որ արդարաւաբա համար, փաստերը բացակայում են, հակառակ դէպքում մի ըստ միջէ պիտի ներկայացնէր:

Խնդիրը աւելի պարզելու համար, վերցնենք օրինակներ պ. ուսուցիչը (?) ծիծաղում է, որ իր դէմ գրուած է թէ «Աստղ Արեւելեանի» գործակալ կարգւածէ, եթէ այդպէս է ուրեմն Ռաշտի օդը իր բարեբար ազդեցութիւնը ըստ կարգին արել է նրա ուղեղի վերայ. որ մոռացել է իրեն շնորհւած պաշտօնը «Աստղի» խմբագրութիւնից:

Եթէ նրա գալուանալու հայհոյելու պատճառն այն է, որ «Սուս» ը գրել է թէ «գլխաբաց ընդունեց Աստղը» դա համար պէտք չէ շատ հեռու գնալ, դեռ երկու շաբաթ չէ անցել այն օրից, որ աղաներից մէկի տնում հացկերոյթի ժամանակ, իր տիրացուական բոլոր հնարները թափում էր գովաբանելու խաւարամիտների այդ թերթը, և որը սակայն չէր յաջողում, երբ դիմացինի փաստերի առաջ խեղդեց, այն ժամանակ միայն լուսահատ, «յաւ կը լինի» բառերով կարողացաւ հեռանալ, իր կարծիքները փշրող, պարոնից:

Եւ ինչ էք կարծում, նա չէ հասկանում որ իր մասին գրուածները, զուտ ճշմարտութիւններ են, ոչ, նա հասկանում է միայն արգալանալու փաստեր չ'ունի, նա պատասխանեց բայց շատ անմիտ բան. ինչու, «Ժամանակի կորուստ», համարեց յօդւած գրել. բայց ժամանակի կորուստ չ'եղաւ հայհոյանքներ գրել:

«Անմեղ» տիրացու, փաստեր չունի հայհոյանքներ շատ գիտէ, գրում է և

կարծում, որ պատասխան է դա: Տգէտ խմբագրութիւն, տգէտ թղթակից. հասպաքնէ կարելի է տեսնել Վստղ-Արեւելեանի մէջ:

Սուս

18 մարտ 96

Ռաշտը գիծերով լինէն է. անցեալ օրերը մէկը իր սուրը մերկացնելով բանէի քարվանսարայում յարձակում է անցորդների վրայ. հետեանքը գուցէ վատ կը լինէր եթէ կառավարութեան մարգի վրայ հասնելով չը բռնէին նրան:

Սև փողի արժէքը իջնելու պատճառաւ մեծ լուրմուռք է առաջացել ժողովրդի մէջ: 3 շաբաթի 2 շահու տեղ է ընդունվում, առևտուրը դադարելու վրայ է: ամեն բան դժուարութեամբ է ընթանում:

Ռաշտի ժողովրդի մէջ կատարեալ մեռելութիւն է տիրում, խանդ, եռանդ, գործունէութիւն ամեն ինչ տակն ու վրայ է եղած. չնայելով մի քանի տարի սրտինց առաջ մի խումբ երիտասարդներ մայնակցութեամբ մի քանի օտարական պարոնների եռանդուն կերպով աշխատում էին. սակայն դրանց տեղը այժմ ժողովրդի են ողորմելի հացկատակներ. աշխտեցուն այլ ևս ոչինչ չի մնում գործելու: Մէկը իր ուրի վէժի համար քանդում ունչացնում է բոլոր հաստատութիւնները, միւսը իր մոլիշահերից դրդւած ոտի տակն է առնում ուսումնական մեթոդը՝ իր գործին պարագլուխ հանդիսացնելով Բ. Սողոմոնեանի նման տգէտ ուսուցիչներին: Ի դէպ է ասել՝ բաւական չէ այդ անձը, որ իր խայտառակ արարքներով յայտնի եղաւ բոլոր աշխարհին, դեռ քաջութիւն էլ է համարում իրեն գրական ասպարէզ դուրս գալ, լըրադիրների էջերը կեղտոտել, առանց ամաչելու, առանց կարմրելու, չեմ ուզում երկարօրէն խօսել այդ վայրենաբարոյ ուսուցչի մասին և առաջ բերել դեռ նրա խօրհրայի տարում գործած սրիկայութիւնները, որոնց մասին պարզ ապացոյցներ և յայտնի վկաներ կան:

Ընթերցող. այն է մեզ տանջում թէ ինչպէս մէկը փոխանակ իր սխալները ուղղելու, իր խայտառակութիւնները թողնելու, դեռ կռիւ պատերազմ էլ է մղում, իր կեղտոտը մերկացնողի դէմ, կեղծել ուղղելով ճշմարտութիւնը:

Ս.հա թէ ինչպիսի պարագիտներից, քծնող աղաներից, շողջորթող լեզուներից վարակւած Ռաշտի հասարակութիւնը թողնում է իր նախկին գործունէութիւնը, 60 տուն ժողովրդի մէջ չը կայ այսօր հաստատ ուսումնարան, չկայ թատրոնական բեմ, սրահ, մեծ անկանոնութեան ենթակայ է նաև գրադարանը. ցաւ է սիրտ ո՞ր մէկն ասել, մեռելութիւն չէ արդեօք այս բոլորը:

Մուրադ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ

Թէհրան 8 ապրիլի 96

Մշակի № 33-ում կարդում ենք «Տաւիդի նախկին խմբագիր» Վ. Փափագեանն ստորագրութեամբ մի նամակ. որի մէջ, պարոնը զարմանալի միամտութեամբ բա-

ցատրում է թէ ընդհարում է ունեւել մեզ հետ և հեռացել խմբագրութիւնից: Ռաւստատանի բաժանորդներին՝ անցեալ տարւայ № 40 ից սկսած Տաւիդի համարները փոփոխումն մէջ, ըստ հաստատութեան փոփոխութեան, երկրորդ մասի կառավարչին, թափուած միալու և չսղարկելու պատճառով:

Կեղծ ու խորագիր խմբագիրը ի դւր ճիգ է թափում, թաղնելու «Թիմատար» գրած նամակների ետևում և աւելորդ ջանք է տնում աղաքանալու և ծածկելու իր անվայել ընթացքնը:

Պարոնը ոչ թէ բաղխում է ունեւել մեզ հետ, աղ սուտ է, այլ նա՛ փաւս որ կերպով, ուրիշ շատ պատճառների համար, ծեծ ուտելով վնասել է խմբագրութիւնից:

Սուտ է ասում նա, միւսին ժամանակ սուտ է ասում փոփոխել վարչութեան երկրորդ բաժնի կառավարիչը, որ անցեալ տարւայ № 40-ից սկսած համարները չի ուղարկած. բոլոր ուղարկել է տաւից բացառ թեան, բացի 34-35-36 համարները այն բաժանի ընդերքին միայն, որինքը (կեղծխմբագիրը) նրանց վճարելը ի վրայ էր առնում, սակայն ամիսներ չվճարելուց լեւայ փոփոխութիւնից լեւ վրացեալ համարները:

Իսկ ինչ վերաբերում է խմբագրութիւնից արտայտւելուց լեւայ շարունակ «խմբագիր» ստորագրելուն, այդ իր պատճառներն ունի, որոնց կը բացատրենք ժամանակին:

Արտատպեր հրատարակիչ Անդրէաս Բէկնազարեանց

Յ. Գ.

Սպասում ենք, այս երկրորդ անգամն է որ կրկնում ենք, որ նա մեզ հետ գործ կ'ենենայ, ինչպէս խոստացել է մեզ, ասնաւոր նամակով և յայտարարութիւններով, Կ վկասի մամուլի կամ առանձին բրոշիւրի մ'ըցով, այն ժամանակ ամեն բան կը բացատրուի:

Նոյն.

Թէհրան 8 ապրիլ 96

Տաւիդի № 8-ի Ներքին տեսութեան մէջ երկարօրէն խօսած էիք զեկտեմբեր 10-ին տրուած երեկոյթի հասցիների մասին, որոյ համար այնտեղ քաջադուրսութիւնը կուայ այդ երեկոյթի լաւ ձեռնադրովը, սակայն ես պարտ եմ համարում պատասխանել այս կէտին միայն, որ իբրև փաստ ներկայացնում էք իմ և պարոն Պողոս Մհո. Սարգս'անցի ասած խօսքը որ իբրև թէ խոտովանւել էր, որ այդ երեկոյ թի ֆեռը գողացուել է թողնելով պ. Պողոսին որ իւր մասին խօսէ, սակայն ես իմ կողմից պատասխանում եմ որ երբէք չ'եմ ասել այդպիսի մի խօսք, և եթէ ասել եմ իմ խօսքս եղել թէ բիւֆետը արդիւնաբեր չ'եղաւ *) այլ չի նշանակում թէ գողացւեցաւ:

Կարապետ Պողոսեանց

*) Ցոյց է տալիս որ յիշողութիւնից քիչ զուրկ էր: Հենց ձեր այժմեան ասածի մէջ էլ դեռ կասկած էր յայտնում. եթէ առ այժմ այդ կտոր խոս ուղանում էր, յետոյ էլ, երբ հետզհետէ ձեր յիշողութիւնը իր տեղը կը գայ կը խոտովանւեր միւս կտորն էլ միայն եթէ վնաս չը լինէր ասելու:

Ն. Նմ.

Թէհրան 8 ապրիլի 96

Աստղի 4-դ թւում, Հրանդ կեղծ ըստորագրութեան (որին կարծում եմ որ Վաղարշակի մշականցը լինի) և «Թափառական գէրվիշներ» խորագրի տակ կարգացի պարսիկ բա՛աստեղծութիւնից

میانزار موری که داد کس است

اوجان دارد و جان شیرین خوش است

Կտորի թարգմանութիւնը այսպէս: Հրաժար իր չալչալելոյց, մինչև անգամ այն որդին,

որ սողում է ստքիդ տակ.

Քանզի նա էլ մի կեանք ունի և իւր կեանքով այդ չնչին,

Հրճելու է ընդունակ:

որն իսկապէս ասած չի համապատասխանում բանաստեղծութեան բուն ոգուն, վերջիջեալ կտորի բուն միտքն է:

Մըջինիկին, աշխատասէր արարածին, Մի չարչաւ էլ և կաւեցնել դու հողածին.

Հատկ տանող է նա թէև, բայց ունի կեանք

Եւ քաղցր կեանքն, առ հասարակ է հաճւանք:

Ուն ուղարկելի վերջիջեալ թե թի խմբագրութեան, բայց նա չի ուզում երևի իր սխալներն ուղղել և դորա համար էլ մինչև այսօր չի տպագրել նրան և չի էլ պատասխանել:

Թ. Ն. Անտոնօֆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամսոյս 7-ին մի պաշտօնական լայտարարութեամբ բարձագոյն հրամայւեցաւ հացի և մսի ամեն տեսակ տուրքերի բարձուելը, որով ազատութիւն է տրոււմ ցանկացող մասվածառութեամբ գրառւելու առանց ունի մի փող տուրք վճարելու:

Թէհրանում թուղթ վերջացած լինելու և մի թղթերն էլ դեռ չը հասած լինելու պատճառով պարտաւորւում ենք Տաւիդի մի քանի համարները երկու փոքր թերթերի վերայ տպագրել:

Խմբագրութիւնս իր շնորհակալութիւնն է յայտնում պ. Միրզա Միրզա-լեացի, Ազգի թէն հեռագիրների թարգմանութեան գործին մէջ «Նաւիդ» մէկ տարի անկ'ղծօրէն աշխատակցելուն համար: Նա դադարեցրել է այժմ իր աշխատակցութիւնը ճանապարհորդելու մտադրութիւն ունենալուն պատճառով:

Հարց ենք տալիս Ազ. հազարաձուլութեան Խ' շրջառւանի մեծ ծախսով մէկ օրիո դո՛ դրոց, վարժուհի և մէկ շօտ էլ աշակերտահիներ պահել, որ ի պաշտ ջնը հայկին և քսան օ վայ մէջ, մի ամենաթեթեւ ձեռագործ անգամ չ'են կարող արտադրել:

Շնակատ առ ճակատ, սուրի դէմ սուր, գնտակի դէմ գնտակ՝ գոռացող, բայց վախկտ կնոջ նման վրադուրների ետև թագ կացող վատասիրտ խմբագրութիւնից, իր հրատարակութեան տ'ած «սովելոց լաւ ձեռագործ» և հասարակութիւնը յօգւածի օգնակների մասին, հրապա-

րալաւ ցտցադրութիւն ենք պահանջում:

Ս. Կանաչ վերջապէս Վաղվիւայ թաղի ընթ. գանձապահից, փոխ-Հօրնոյն ընթերցարանի օգտին 1894-ին տրւած երեկոյթի հաշիւը. մուտք 387 դ. 8 շ. ելք 348 դուա. թիւֆէտի ծախս մօտ 130 դ. իսկ մուտք. 49 դ. դարձեալս և փողի տարբերութիւն 4 դ. 10 շ. Վերջապէս պ. գանձապահը կարծես դժգոհ իրենից հաշիւ պահանջելու համար, իրեն թոյլ է տալիս խմբագրութեան խորհուրդներ տալու.... հաշիւը կը տպւի որպէս լայտարարութիւն եթէ կը ցանկանան:

Մայիս ամիսը մօտենում է և քննութիւններն էլ շուտով կսկսեն, չը գիտենք Ազգ. հազարաձուլութիւնը այս տարւայ ուսուցչական տաղնապը կրելուց լեւայ ի՞նչ մտադրութիւն ունի գացող ուսումնական տարւայ համար, առ այժմ մեր լսածին նայելով՝ այսքանը գիտենք միայն, որ Տիկին Ա. Բոստանկ Ս. Մհ. Պետրոսեանը և Տիկ. Կատարինէ Ս. Գեղեցեանցը վա՛ճել են վարժուհի Սիհրան Եֆէնտ՝ Բաղդասարեանը 270 թումանով ուսուցիչ: Այս վերջինս ուրիշ գործ չը կարողանալ գտնելու պատճառով մտադրութիւն ունէր Ուրմիայում մի որբանոց բանալու:

Դովաթայ թաղի Հակ. վարժարա ի տնօրէնը երբ երեք աշակերտների ֆալսիկայի է կապել տւել, հրամայել է աշակերտներին, որ իրենք այդ դահճի պաշտօնը կատարեն իրենց աշակերտակիցների վրայ և մինչ սրանք խղճալով կամաց են գարկելիս եղել, տնօրէնը բա՛կա լած փայտը առնում է նախ մի քանի անոցում հարածներ տալիս է հարածող աշակերտներին և ապա ինքը շարունակում կապած աշակերտներին գազանաբար ծեծել: Պատմում են որ ուսուցիչ պ. Յ. Դասարեանը չը դիմանալով այդ տեսակ տնօրէնի գար մանալի փափկաւրտութիւն: Նրեւի մոռացել է նա, երբ 10—12 մլթր բարձրութիւնից աթոռներ ու աղիւսներ էր շրպրտում փոքր աշակերտների գլխին, որ ժամերով աշակերտների ձեռքերը բարձր գերաններից կապելուց լեւայ անխաղաղ հարածներ էր տեղում արդէն կասկած ու ուռած ձեռքերի վերայ մինչև արեան դուրս ժալթբելը, որ ամբողջ մի ամբարվառելի փայտերով ու ջրով լի կուժերով ջախջախում էր միայն մի աշակերտի գլուխ և....

Հայկազեան երկսեռ դպրոցների հոգաբարձութիւնը ի հաշիւ ծնողած կարել է տալիս աշակերտներ ի համար մի պարզ համազգ'ստ, յորէլեանի օրւայ համար:

Մեր ձեռքն անցաւ մի լայտարարութիւն անստորագիր և կեղծաւ գրութիւնով, որն իբր թէ պաշտպան կանգընելով խեղճ կօշկակարների սպանում է մի ուսուցչի մատնել իր դեպանատանը. սորա հեղինակները, կարծում ենք այն մարդիկների լինելը, որոնք մեր հաշիւ պահանջելը որ և է դէպքում մատնութիւն են համարում....

